

# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍԻ 5-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց Հոգեշնորհ Տ. Գրիգոր աբեղա Եղիայանը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 9-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ դերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանի, վերադարձավ Մայր Աթոռ Կիսլովոդսկից, ուր հանգստանում էր։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 11-ԻՆ, ՇԱԲԱԹ, «տօն Շողակաթի Սրբոյ Էջմիածնի ըստ տեսլեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 12-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Վերափոխումն Ս. Աստուածածնի»։ Մայր Տաճարում պատարագեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց խաղողօրհնեքի արարողությունը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 13-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «յիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց Հոգեշնորհ Տ. Եղիշե աբեղա Գարաջյանը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 19-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Հոգեշնորհ Տ. Ներսես աբեղա Պոզապալյանը, բնաբան ունենալով «Աղաչեա վասն մեր զառ ի քէն զմարմնացեալն Աստուած. զի լռեցին պատերազմունք, դադարեցին յարձակմունք թշնամեաց, տնկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի, աղաչեմք»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 20-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Մայր Աթոռում տեղի ունեցավ ճարտարապետական հանձնախմբի ժողով, նախագահությամբ Վեհափառ Հայրապետի։ Քննարկվեցին Տրդատի դռան, նոր Վեհարանի վերանորոգման հետ կապված հարցեր և Գեղարդի վանքի միաբանության և ուխտավորների շենքերի նախագծերը։

